ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
«ՀՀ ԱՄ ՄՀ-ԳՀԱՇՁԲ-02/21» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Մեծամոր

09.06.2021թ.
Ժամը 11:00

Հայտերի բացման և գնահատման նիստը տևել է 09.06.2021թ.-23.06.2021թ.:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ (ԳՊ/ԳԱՊ)

Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար – Ն.Թադևոսյանը,

Գնահատող անդամներ՝ (ԳՊ/ԳԱ)

Աշխատակազմի գլխավոր մասնագետ – Ս.Սահակյանը,

Աշխատակազմի առաջատար մասնագետ – Վ.Դաբաղյանը,

Քարտուղար՝(ԳՊ/ՄՀմ) – Ա.Գևորգյանը:

«ՀՀ ԱՄ ՄՀ-ԳՀԱՇՁԲ-02/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ն.Թադևոսյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ՀՀ ԱՄ ՄՀ-ԳՀԱՇՁԲ-02/21» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանք՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.
3. Յուրաքանչյուր Մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ԱՄ ՄՀ-ԳՀԱՇՁԲ-02/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:
6. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Ն.Թադևոսյան)

1.1 ՀՀ Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի կարիքների համար կազմակերպված «ՀՀ ԱՄ ՄՀ-ԳՀԱՇՁԲ-02/21» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակիցների անվանում
1	«Ավետիսյան Շին Մոնտաժ» ՍՊԸ
2	«ԳՐԻՆՍԱՆ» ՍՊԸ
3	«Դողսե» ՍՊԸ
4	«ԺԻԼՅՈ» ԱԿ
5	«ԼՈՒՍԻ-ԱՐԵԳ» ՍՊԸ
6	«Կանժիլստրոյ» ՍՊԸ
7	«Մենարշին» ՍՊԸ
8	«Սյունիք» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. «ՀՀ ԱՄ ՄՀ-ԳՀԱՇՁԲ-02/21» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանք՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

(Ն.Թադևոսյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը www.armeps.am կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի, բացառությամբ «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի, որում բացակայում էին հրավերով սահմանված փաստաթղթերը՝ այդ թվում գնային առաջարկը:

2.2 Մասնակիցների՝ բացառությամբ «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ի, էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են և դրանք համապատասխանում են «ՀՀ ԱՄ ՄՀ-ԳՀԱՇՁԲ-02/21» ծածկագրով

գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), բացառությամբ հետևյալ դեպքերի.

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 4.3 կետի 4) ենթակետով սահմանվել է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ շինարարական աշխատանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող՝ սույն հրավերին կցված նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին համապատասխանող սարքերի և սարքավորումների տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները, արտադրողները և երաշխիքային ժամկետները:

Միաժամանակ հրավերին կցված նախագծային փաստաթղթերով սահմանավել են Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները:

Նախագծային փաստաթղթերով երաշխիքային ժամկետներ են սահմանվել **մետաղական թիթեղի և փայտի համար**, համապատասխանաբար **30 և 20 տարի**, սակայն

- «ԳՐԻՆՍԱՆ» ՍՊԸ-ի կողմից հայտում ներառված Հավելված 1.1-ով չի ներկայացվել **փայտի** վերաբերյալ տեղեկատվություն, իսկ **մետաղական թիթեղի երաշխիքային ժամկետը նշվել է 5 տարի**, այնինչ պետք է սահմանվի նախագծային փաստաթղթերով սահմանված երաշխիքային ժամկետներին համապատասխան:
- «ԺԻԼՅՈ» ԱԿ-ի կողմից հայտում ներառված Հավելված 1.1-ով չի ներկայացվել **մետաղական թիթեղի և փայտի** վերաբերյալ տեղեկատվություն, փոխարենը ներկայավցել է տեխնիկական միջոցների վերաբերյալ տեղեկատվություն:
- «ԼՈՒՍԻ-ԱՐԵԳ» ՍՊԸ-ի կողմից հայտում ներառված Հավելված 1.1-ով չի ներկայացվել **մետաղական թիթեղի և փայտի** վերաբերյալ տեղեկատվություն: Միաժամանակ ընթացակարգի հրավերի 1-ին մասի 4.3 կետի 7) ենթակետով սահմանվել է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ սույն ընթացակարգի շրջանակում կնքվելիք պայմանագիրը կատարելու ժամանակ, գնային առաջարկով ներկայացվող արժեքի ավելի քան 50 տոկոսը՝ հանրագումարային ձևով, հայաստանյան ծագում ունեցող աշխատանքային և (կամ) արտադրական ռեսուրսների օգտագործման միջոցով պայմանագրի կատարմանը ուղղելու պարտավորության վերաբերյալ (հավելված 1.2)՝ նշելով նաև աշխատողների քանակը, որոնց միջոցով պետք է ապահովվի պայմանագրի կատարումը, կցելով նաև օգտագործվելիք նյութերի ցանկը՝ անվանումների, գումարների և քանակների նշումով: Սակայն «ԼՈՒՍԻ-ԱՐԵԳ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.2-ով չի նշվել օգտագործվելիք նյութերի ցանկը՝ անվանումների, գումարների և քանակների նշումով:
- «Մենարշին» ՍՊԸ-ի կողմից հայտում ներառված Հավելված 1.1-ով չի ներկայացվել **մետաղական թիթեղի և փայտի** վերաբերյալ տեղեկատվություն, փոխարենը ներկայավցել է տեխնիկական միջոցների վերաբերյալ տեղեկատվություն:
- «Սյունիք» ՍՊԸ-ի կողմից հայտում ներառված Հավելված 1.1-ով չի ներկայացվել **մետաղական թիթեղի և փայտի** վերաբերյալ տեղեկատվություն, փոխարենը ներկայավցել է տեխնիկական միջոցների վերաբերյալ տեղեկատվություն: Միաժամանակ ներակայացված ծավալաթերթում՝ Ընդամենը տողում նշված գումարը /18795.74 հազ. Դրամ/ չի համապատասխանում հայտի գնային առաջարկի Արժեք սյունակում նշված /18795700 դրամ/ գումարին:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /Այսուհետև՝ Կարգ/ 41-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և առաջարկել վերոնշյալ մասնակիցներին մինչև կասեցման ժամկետի ավարտը՝ **11.06.2021թ.**, շտկել վերը նշված անհամապատասխանությունները:

Մասնակիցները սահմանված կարգով և ժամկետում ներկայացրել են շտկված փաստաթղթերը:

«Դողսե» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկի Արժեք սյունակում նշված /18,216,607/ և ԱԱՀ սյունակում նշված /3,643,322/ գումարների հանրագումարը չի համապատասխանում Ընդհանուր գինը սյունակում նշված /21,859,932/ գումարին:

Հաշվի առնելով վերոնշյալը և հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջները, գնահատող հանձնաժողովը որոշեց «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ի և «Դողսե» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը գնահատել անբավարար և մերժել:

2.4 Մասնակիցների՝ բացառությամբ «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ի և «Դողսե» ՍՊԸ-ի, հայտերով ներկայացված փաստաթղթերը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են **«ՀՀ ԱՄ ՄՀ-ԳՀԱՇՁԲ-02/21»** ծածկագրով ընթացակարգի հրավերի պայմաններին (պահանջներին) համապատասխանող:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր Մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Ն.Թադևոսյան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Հ/մ	գումարը (դրամ)	Մրցույթին մասնակցող կազմակերպությունների			
				անվանումը՝ ըստ զբաղեցրած տեղերի	գնային առաջարկը		
					արժեքը	ԱԱՀ-ն	Ընդհանուր գինը
1	ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի թիվ 1 բազմաբնակարան շենքի տանիքի հիմնանորոգման աշխատանքներ	դրամ	26 368 980	«ՄԵՆԱՐՇԻՆ» ՍՊԸ	13 500 000	2 700 000	16 200 000
				«ԳՐԻՆՍԱՆ» ՍՊԸ	15 600 000	-	15 600 000
				«ԺԻԼՅՈ» ԱԿ	18 455 795	3 691 159	22 146 954
				«Սյունիք» ՍՊԸ	18 795 700	3 759 140	22 554 840
				«Լուսի-Արեգ» ՍՊԸ	19 225 950	3 845 190	23 071 140
				«Ավետիսյան Շին Մոնտաժ» ՍՊԸ	26 586 000	5 317 200	31 903 200

3.2 Մասնակիցների՝ բացառությամբ «Դողսե» ՍՊԸ-ի, գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը հայտերով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

3.3 Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի և ընթացակարգի հրավերի 8.6 և 8.7 կետերի պահանջները, և քանի որ ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, որոշեց 21.06.2021թ.-ի ժամը 11:00-ին ՀՀ Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանում (ք. Մեծամոր, Վարչական կենտրոն 1) հրավերի պահանջներին բավարարող հայտ ներկայացրած մասնակիցների հետ կազմակերպել միաժամանակյա բանակցություններ:

Բանակցության համար նշանակված օրը և ժամին, ծանուցված մասնակիցներից ոչ ոք չի ներկայացել բանակցության, ուստի բանակցության արդյունքում մասնակիցների հայտերով ներկայացված գները մնացել են անփոփոխ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ԱՄ ՄՀ-ԳՀԱՇՁԲ-02/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Ն.Թադևոսյան)

4.1 «ՀՀ ԱՄ ՄՀ-ԳՀԱՇՁԲ-02/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ՝ ներկայացված գնային առաջարկների հիման վրա, ընթացակարգի ընտրված մասնակց ճանաչվեց **«ՄԵՆԱՐՇԻՆ» ՍՊԸ**-ն:

Մյուս մասնակիցները հայտարարվեցին հաջորդաբար տեղ զբաղեցնող մասնակիցներ:

4.2 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ԱՄ ՄՀ-ԳՀԱՇՁԲ-02/21» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

4.3 Գնահատող հանձնաժողովը որոշեց «ՀՀ ԱՄ ՄՀ-ԳՀԱՇՁԲ-02/21» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել՝ հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածների պահանջները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:

(Ն.Թադևոսյան)

5.1 «ՀՀ ԱՄ ՄՀ-ԳՀԱՇՁԲ-02/21» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

6. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Ն.Թադևոսյան)

6.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ (ԳՊ/ԳԱՊ) _____ Ն. Թադևոսյան

Գնահատող անդամ՝ (ԳՊ/ԳԱ) _____ Ս. Սահակյան

Գնահատող անդամ՝ (ԳՊ/ԳԱ) _____ Վ. Դաբաղյան

Քարտուղար՝ (ԳՊ/ՄՀմ) _____ Ա. Գևորգյան